

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1. Ձրադվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2004թ. հունվար-սեպտեմբերին հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1230.9 հազ. մարդ, որոնց 90.6%-ը կամ 1114.6 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 9.4%-ը կամ 116.3 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չեն ունեցել աշխատանք, գրանցվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

Տնտեսապես ակտիվ բնակչության դինամիկան 2003 - 2004թթ.

(միջինը ժամանակաշրջանի համար)
այդ թվում

	Տնտեսապես ակտիվ բնակչությունը		զբաղվածության մակարդակը ¹ , %			
	ընդամենը, հազ. մարդ	նրանցից՝ կանայք, %	աշխտողական մակարդակը ¹ , %		գործազրկության մակարդակը ¹ , %	
			ընդամենը	նրանցից՝ կանանց	ընդամենը	նրանցից՝ կանանց
2003 թ.՝						
Հունվար-մարտ	1229.0	49.6	89.6	42.6	10.4	7.0
Հունվար-հունիս	1246.7	49.5	89.8	42.6	10.2	6.9
Հունվար-սեպտեմբեր	1250.5	49.5	89.9	42.7	10.1	6.8
2004 թ. (գնահատական)						
Հունվար-մարտ	1203.5	49.6	90.2	42.8	9.8	6.8
Հունվար-հունիս	1225.8	49.6	90.4	42.9	9.6	6.6
Հունվար-սեպտեմբեր	1230.9	49.6	90.6	43.0	9.4	6.5
<i>ԱՃ / նվազում (+/-)</i> <i>(2004 թ. / 2003 թ.)</i>	-25.5	0	+0.6	+0.2	-0.6	-0.2
	-20.9	+0.1	+0.6	+0.3	-0.6	-0.3
	-19.6	+0.1	+0.7	+0.3	-0.7	-0.3

Աշխատանքային ռեսուրսների փոփոխությունը 2002 - 2003թթ.

(միջինը ժամանակաշրջանի համար)

Աշխատունակ տարիքի աշխատունակ բնակչությունն աշխատունակ տարիքի բնակչության նկատմամբ, %		Աշխատանքային ռեսուրսներ				Տնտեսական ակտիվության մակարդակը		Տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունը	
		ընդամենը, հազ. մարդ		բնակչության ընդհանուր թվաքանակի նկատմամբ, %		աշխատունակ տարիքի բնակչության նկատմամբ, %			
2003 թ.	2002 թ.	2003 թ.	2002 թ.	2003 թ.	2002 թ.	2003 թ.	2002 թ.	2003 թ.	2002 թ.
97.2	97.1	2008.4	1976.9	62.5	61.6	62.1	62.7	39.1	37.8

2003թ. տնտեսապես ակտիվ բնակչությունը տնտեսապես ոչ ակտիվ բնակչության թվաքանակին գերազանցել է 1.6 անգամ՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 0.1-ով:

¹ *Կանանց զբաղվածության և գործազրկության մակարդակները հաշվարկված է ընդամենը տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ:*

Աշխատանքային ռեսուրսների կառուցվածքը 2003թ.

(միջինը ժամանակաշրջանի համար)

Աշխատանքային ռեսուրսներ, հազ. մարդ	այդ թվում՝		Տնտեսապես ակտիվ բնակչությունից		Աշխատունակ տարիքի բնակչության նկատմամբ, %	
	տնտեսապես ակտիվ բնակչություն	տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն	զբաղվածներ	պաշտոնապես գրանցված գործազուրկներ	զբաղվածության մակարդակը	պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը
2008.4	1232.4	776.0	1107.6	124.8	55.8	6.3

Աշխատանքային ռեսուրսների ընդհանուր թվաքանակում զբաղված բնակչությունը կազմել է 55.1%, պաշտոնապես գրանցված գործազրկությունը՝ 6.2%, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ նվազելով, համապատասխանաբար 0.9%-ով և 0.6%-ով:

Զբաղվածների ընդհանուր թվաքանակում կանայք կազմել են 525.8 հազ. մարդ կամ ընդամենը զբաղվածների 47.5%-ը, պաշտոնապես գրանցված գործազուրկների ընդհանուր թվաքանակում կանայք կազմել են 88.1 հազ. մարդ կամ ընդամենը գործազուրկների 70.6%-ը:

Կանանց զբաղվածության մակարդակը տնտեսապես ակտիվ կանանց մեջ կազմել է 86.1%, տղամարդկանց զբաղվածության մակարդակը համապատասխան խմբի մեջ՝ 93.6%: Կանանց գործազրկության մակարդակը տնտեսապես ակտիվ կանանց մեջ կազմել է 13.9%, տղամարդկանց գործազրկության մակարդակը համապատասխան խմբի մեջ՝ 6.4%:

Զբաղված բնակչության 76.3%-ը կամ 845.0 հազ. մարդ զբաղված է եղել տնտեսության մասնավոր հատվածում, 23.3%-ը կամ 257.8 հազ. մարդ՝ պետական հատվածում և կառավարման համակարգում, 0.4%-ը կամ 4.8 հազ. մարդ՝ հասարակական և կրոնական կազմակերպություններում և հիմնադրամներում: Միայն գյուղացիական տնտեսություններում զբաղվածները կազմել են 503.5 հազ. մարդ կամ զբաղված բնակչության 45.5%-ը:

Բնակչության զբաղվածության և տնտեսական ակտիվության մակարդակն ըստ սեռի, 2004թ.

(միջինը ժամանակաշրջանի համար, գնահատական)

	Զբաղվածության մակարդակը, %				Տնտեսական ակտիվության մակարդակը, %			
	բնակչության ընդհանուր թվաքանակի նկատմամբ		աշխատունակ տարիքի բնակչության թվաքանակի նկատմամբ		բնակչության ընդհանուր թվաքանակի նկատմամբ		աշխատունակ տարիքի բնակչության թվաքանակի նկատմամբ	
	ընդամենը	նրանցից՝ կանանց ¹	ընդամենը	նրանցից՝ կանանց ¹	ընդամենը	նրանցից՝ կանանց ¹	ընդամենը	նրանցից՝ կանանց ¹
Գունվար-մարտ	33.8	30.9	54,2	51,0	37,5	35.8	60,1	58.3
Գունվար-հունիս	34,5	31,6	55,3	51,9	38,2	36,5	61,2	59,4
Գունվար-սեպտեմբեր	34.7	31.8	55.6	51.7	38.3	36.6	61.4	59.6
ԱՃ / նվազում (+/-)	+0.7	+0.7	+1.1	+0.9	+0.7	+0.7	+1.1	+1.1
	+0.2	+0.2	+0.3	-0.2	+0.1	+0.1	+0.2	+0.2

2004թ. սեպտեմբերի վերջի դրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում հաշվառման կանգնած 146.5 հազ. աշխատանք փնտրողներից 97.5%-ը կամ 142.8 հազարը եղել են

¹ Կանանց զբաղվածության և տնտեսական ակտիվության մակարդակները հաշվարկված է համապատասխան սեռի բնակչության նկատմամբ:

չգբաղվածներ: Գործազուրկի կարգավիճակ ստացել են չգբաղվածների 78.5%-ը կամ 112.1 հազ.մարդ, նրանցից 7.3 հազարը եղել են գյուղական բնակավայրերում ապրողներ:

2004թ. տարեսկզբից գործազուրկի կարգավիճակ ստացել են 10.5 հազ. մարդ, նրանցից 0.5 հազարը՝ սեպտեմբերին, հաշվառումից հանվել են 17.0 հազ. մարդ, որոնցից միայն 4.9 հազարը կամ 28.8%-ը՝ աշխատանքի տեղավորման պատճառով:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի¹ 2004թ. սեպտեմբերին


	Աշխատանք փնտրողներ		նրանցից՝ գործազուրկներ			
	ընդամենը, հազ. մարդ	2003թ. սեպտեմբերի նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	որից՝ կանայք	2003թ. սեպտեմբերի նկատմամբ, %	որից՝ կանայք
Ընդամենը ՀՀ	146.5	96.5	112.1	78.4	91.8	94.0
ք. Երևան	31.1	88.4	26.8	18.9	85.6	88.3
Արագածոտն	2.5	108.7	1.4	0.9	93.3	90.0
Արարատ	5.1	89.5	3.7	2.6	86.0	86.7
Արմավիր	8.2	97.6	5.1	3.2	91.1	97.0
Գեղարքունիք	8.4	97.7	5.3	3.4	85.4	89.5
Լոռի	28.0	104.1	21.9	14.8	100.5	102.1
Կոտայք	7.5	89.3	5.2	3.7	85.2	86.0
Շիրակ	31.6	99.1	24.6	19.5	93.5	95.6
Սյունիք	16.3	95.9	13.0	8.0	93.5	95.2
Վայոց ձոր	2.4	114.3	1.7	1.2	106.3	109.1
Տավուշ	5.4	101.9	3.4	2.2	97.1	100.0

Տվյալները փաստում են, որ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ 2004թ. սեպտեմբերին գործազուրկների թվաքանակի աճ՝ 6.3%, արձանագրվել է Վայոց ձորի և 0.5% Լոռու մարզերում և 2.9%-14.8%-ով նվազում՝ մնացյալ մարզերում:

Հունվար-սեպտեմբերին պաշտոնապես գրանցված գործազուրկների 93.7%-ը կազմել է քաղաքային բնակչությունը, մասնավորապես, ք.Երևանում՝ 23.9% (2003թ. նույն ժամանակաշրջանի համեմատ նվազելով 1.7%-ով), Գյումրիում՝ 20.4% (աճելով՝ 0.6%-ով) և Վանաձորում՝ 12.8% (աճելով՝ 0.5%-ով):

2004թ. սեպտեմբերին պաշտոնապես գրանցված գործազուրկներից կանայք կազմել են 69.9%՝ օգոստոսի համեմատ աճելով 0.1%, իսկ 2003թ. սեպտեմբերի նկատմամբ՝ աճել է 1.6%-ով: Մարզային կտրվածքով կին գործազուրկների թվաքանակն աճել է միայն Վայոց ձորի և Լոռու մարզերում՝ համապատասխանաբար՝ 9.1 և 2.1%-ներով, Տավուշի մարզում նախորդ տարվա համեմատ մնացել է նույն մակարդակին, իսկ մնացյալ մարզերում նվազել է 3.0%- 14.0% սահմաններում:

Պաշտոնապես գրանցված գործազուրկների շարժն ըստ ամիսների 2003 - 2004թթ.¹



¹ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով:

**Պաշտոնապես գրանցված գործազուրկներն ըստ սեռի, տարիքային և կրթական կազմի¹
2004թ. սեպտեմբերի վերջի դրությամբ**

	Գործազուրկներ		Նրանցից՝			
	ընդամենը, հազ. մարդ	ընդամենի նկատմամբ, %	կանայք, հազ.մարդ	կանանց ընդամենի նկատմամբ, %	գյուղական վայրերում ապրողներ, հազ. մարդ	գյուղական վայրերում ապրողների ընդամենի նկատմամբ, %
Ընդամենը գործազուրկներ	112.1	100	78.4	100	7.0	100
<i>ըստ տարիքի.</i>						
մինչև 18 տարեկան	0.2	0.2	0.1	0.1	0.1	0.7
18 - 22	5.6	5.0	3.8	4.9	0.5	7.7
23 - 30	25.1	22.4	15.7	20.0	1.4	20.2
31 - 50	70.2	62.6	51.8	66.1	4.3	61.6
51 և բարձր	11.0	9.8	7.0	8.9	0.7	9.8
<i>կրթությամբ.</i>						
բարձրագույն	14.7	13.1	9.3	11.9	0.4	6.1
միջնակարգ մասնագիտական	28.8	25.7	18.6	23.7	1.6	22.7
ընդհանուր միջնակարգ	62.6	55.9	47.1	60.1	4.0	56.3
թերի միջնակարգ	6.0	5.3	3.4	4.3	1.0	14.9


**Աշխատանք փնտրող անձանց աշխատանքի տեղավորումը
2004թ. հունվար-սեպտեմբերի վերջին¹**

	ընդամենը հազ. մարդ	Նրանցից՝		Ապահովվել են աշխատանքով		Նրանցից՝ կանայք
		կանայք, %	ընդամենը հազ. մարդ	աշխատանք փնտրողների նկատմամբ, %		
Աշխատանք փնտրողներ	146.5	65.7	6.1	4.2	53.1	
<i>Նրանցից՝ չգրավածներ</i>	142.8	66.3	6.0	4.2	52.8	
<i>Նրանցից՝</i>						
գործազուրկներ	112.1	70.0	4.9	4.3	53.5	
կենսաթոշակառուներ	1.9	52.9	0.0	1.7	40.6	
<i>Նրանցից՝ հաշմանդամներ</i>	1.3	49.7	0.0	1.8	33.3	
մինչև 1 տարի աշխատանքային ստաժ ունեցողներ	4.2	49.7	0.1	2.1	52.3	
առաջին անգամ աշխատանք փնտրողներ	24.6	53.8	1.0	4.0	49.6	
<i>Նրանցից՝ ուսումնական հաստատութ յունների շրջանավարտներ</i>	5.8	56.3	0.0	1.2	66.7	

Աշխատանքի տեղավորվածների 61.2%-ն աշխատանք է գտել տնտեսության մասնավոր հատվածում, 25.1%-ը՝ պետական հատվածի կազմակերպություններում, 13.2%-ը՝ սեփականության խառը տիպի կազմակերպություններում, իսկ 0.5%-ը՝ հասարակական կազմակերպություններում:

¹ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով:

Աշխատանք փնտրողների և աշխատանքի տեղավորվածների հարաբերակցությունը ըստ մարզերի 2004 թ. սեպտեմբերի վերջին



«ՀՀ Զբաղվածության ծառայություն» գործակալության միջնորդությամբ աշխատանքով ապահովված նախկին գործազուրկների թվաքանակի փոփոխությունը ըստ աշխատանք փնտրելու տևողության, 2004 թ. հունվար-սեպտեմբերի վերջին¹

	Նախկին գործազուրկներ, հազ. մարդ	ըստ աշխատանք փնտրելու տևողության, %				Աշխատանք փնտրելու (գործազուրկության) միջին տևողությունը, ամիս			
		մինչև 3 ամիս	3 – 6 ամիս	6 – 12 ամիս	1 տարի և ավելի	ընդամենը	կին	տղամարդ	
2003 թ.									
Հունվար-մարտ	1.4	4.7	8.0	14.1	73.2	14.9	15.0	14.8	
Հունվար-հունիս	3.0	5.6	8.6	15.0	70.8	14.6	14.5	14.6	
Հունվար-սեպտեմբեր	4.8	4.9	8.9	14.8	71.4	14.7	14.6	14.7	
2004 թ.									
Հունվար-մարտ	1.6	3.9	8.1	16.4	71.6	14.8	14.7	14.9	
Հունվար-հունիս	3.4	5.1	6.4	12.9	75.6	15.1	14.8	15.5	
Հունվար-սեպտեմբեր	4.9	4.6	6.4	12.6	76.4	15.3	15.0	15.5	
<i>ԱՃ / նվազում (+/-) (2004 թ. / 2003 թ.)</i>	<i>+0.2</i>	<i>-0.8</i>	<i>+0.1</i>	<i>+2.3</i>	<i>-1.6</i>	<i>-0.1</i>	<i>-0.3</i>	<i>+0.1</i>	
	<i>+0.4</i>	<i>-0.5</i>	<i>-2.2</i>	<i>-2.1</i>	<i>+4.8</i>	<i>+0.5</i>	<i>+0.3</i>	<i>+0.9</i>	
	<i>+0.1</i>	<i>-0.3</i>	<i>-2.5</i>	<i>-2.2</i>	<i>+5.0</i>	<i>+0.6</i>	<i>+0.4</i>	<i>+0.8</i>	

Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակի փոփոխությունը ըստ աշխատանք փնտրելու տևողության, 2004 թ. հունվար-սեպտեմբերի վերջին¹

	Գործազուրկներ, հազ. մարդ	ըստ աշխատանք փնտրելու տևողության, %				Աշխատանք փնտրելու (գործազուրկության) միջին տևողությունը, ամիս		
		մինչև 3 ամիս	3 – 6 ամիս	6 – 12 ամիս	1 տարի և ավելի	ընդամենը	կին	տղամարդ
2003 թ.								
Հունվար-մարտ	128.0	4.4	6.0	11.4	78.2	15.4	15.6	15.0
Հունվար-հունիս	125.7	3.8	7.7	10.7	77.8	15.4	15.6	14.9
Հունվար-սեպտեմբեր	122.1	3.5	5.8	10.1	80.6	15.7	15.9	15.4
2004 թ.								
Հունվար-մարտ	118.3	4.8	5.1	9.5	80.6	15.7	15.8	15.5

¹ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով:


	Գործազուրկներ, հազ. մարդ	ըստ աշխատանք փնտրելու տևողության, %				Աշխատանք փնտրելու (գործազրկության) միջին տևողությունը, ամիս		
		մինչև 3 ամիս	3 – 6 ամիս	6 – 12 ամիս	1 տարի և ավելի	ընդամենը	կին	տղամարդ
Հունվար-հունիս	115.1	3.6	6.6	8.7	81.1	15.7	15.8	15.5
Հունվար-սեպտեմբեր	112.1	2.8	5.9	9.5	81.8	15.9	16.0	15.6
ԱՃ / նվազում (+/-) (2004 թ. / 2003 թ.)	-9.7	+0.4	-0.9	-1.9	+2.4	+0.3	+0.2	+0.5
	-10.6	-0.2	-1.1	-2.0	+3.3	+0.3	+0.2	+0.6
	-10.0	-0.7	+0.1	-0.6	+1.2	+0.2	+0.1	+0.2

Թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածության դինամիկան ըստ ամիսների¹, 2004թ.

(ամսվա վերջի դրությամբ)

	Աշխատուժի նկատմամբ գործատուների պաշտոնապես ներկայացրած պահանջարկը, մարդ	Չգրադվածների թվաքանակը մեկ թափուր աշխատատեղի հաշվով	
		մարդ	%
		ճախորդ ամսվա նկատմամբ	ճախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ
Հունվար	691	212	106.5
Փետրվար	621	238	112.3
Մարտ	661	224	94.1
Ապրիլ	701	210	93.8
Մայիս	664	220	104.8
Հունիս	701	208	94.5
Հուլիս	662	219	105.3
Օգոստոս	661	218	99.5
Սեպտեմբեր	626	228	104.6

Չգրադվածների թվաքանակը մեկ թափուր աշխատատեղի հաշվով ըստ ամիսների¹ 2002 -2004թ.



Նպաստառու գործազուրկների թվաքանակը 2004թ. սեպտեմբերին հանրապետությունում կազմել է 5.0 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3545 դրամ: Նույն ամսում դրամական օգնություն ստացել են 9.8 հազ. մարդ: Դրամական օգնության միջին չափը կազմել է 1523 դրամ:

Գործազրկության մակարդակը, հաշվարկած որպես զբաղվածության տարածքային կենտրոններում պաշտոնապես գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2004թ. սեպտեմբերին կազմել է 9.1% և 2004թ. օգոստոսի համեմատ մնացել է նույն մակարդակին:

¹ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով: